# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2021 / 2022

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Հիմնադրամի պատմությունը
- Մեր տեսլականը
- Մեր առաքելությունը
- Հոգաբարձուների խորհուրդ
- Հիմնադրամի կրթական ծրագիր
- Մեր տաղանդները
- Ծրագրի դիմորդներ
- Վարպետության դասեր
- Արտիստների կարծիքներ
- Բեմական փորձ
- Այցելություն համերգների
- Թանգարանային այցեր
- Օտար լեզվի դասընթացներ
- Կանխատեսումներ և փաստացի արդյունքներ
- Կրթաթոշակառուների ձեռքբերումներ
- Արձագանքներ կրթաթոշակառուներից
- Մեր գործընկերները

# ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամն ստեղծվել է 2019թ. Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ, ով և գլխավորում է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի աշխատանքները:
Հիմնադրամը հետապնդում է մշակույթի հանրահռչակման և զարգացման նպատակներ, իսկ նրա գործունեությունն ուղղված է կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի իրականացմանը:
Հիմնադրամի կարևորագույն նպատակն է՝ աջակցել հայկական մշակույթին, մասնավորապես՝
դասական ակադեմիական երաժշտարվեստին:



# ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հավատալով նոր սերնդի տաղանդի ներուժին՝ մենք հնարավորություն ենք տալիս կերտել երաժշտության կայուն ապագան:



# ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բացահայտել, զարգացնել, կրթել և աջակցել տաղանդաշատ երաժիշտներին, մշակույթի և արվեստի ներկայացուցիչներին, մշակութային և կրթական հաստատություններին և կազմակերպություններին ամբողջ աշխարհում:

Տրամադրել օժանդակություն շնորհալի երաժիշտներին, ապահովել նրանց մասնակցությունը միջազգային տարբեր երաժշտական փառատոններին, միջոցառումներին, մրցույթներին և երաժշտական ծրագրերին:

Նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ մշակութային և կրթական կազմակերպությունների և անհատների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը, հայ մշակույթի ներուժի համախմբմանը:

Նպաստել հայկական մշակույթի, դասական երաժշտության կատարողական արվեստի զարգացմանը և տարածմանը Հայաստանում և նրա սահմաններից դուրս:



# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

*Հիմնադրամի գաղափարի շուրջ համախմբված մարդիկ, ովքեր հավատում են հայկական մշակույթի, հայ արվեստի ուժին և շնորհալի հայ պապանիների ներուժին*



***Միհր Աբրահամյան***

*IDBank-ի Վարչության նախագահ*



***Անդրանիկ Գրիգորյան***

*«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի*
*Գլխավոր գործադիր տնօրեն,*
*Տնօրինության նախագահ*



***Արեն Դեյիրմենջյան***

*Ամերիկայի Հայ Ավետարանչական*
*ընկերակցության*
*Հայաստանի մասնաճյուղի տնօրեն*



***Սերգեյ Սմբատյան***

*«Երաժշտություն հանուն ապագայի»*
*մշակութային հիմնադրամի*
*Հոգաբարձուների խորհրդի նախագահ*

*Հայաստանի պետական սիմֆոնիկ*
*նվագախմբի գեղարվեստական ղեկավար*
*և գլխավոր դիրիժոր*



***Նարեկ Վարդանյան***

*The Crowdfunding Formula (TCF)*
*ընկերության համահիմնադիր ու*
*գործադիր տնօրեն*

# *Սիրելի՛ ընկերներ,*

Արդեն երեք տարի է, ինչ «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամն իրականացնում է իր կրթական ծրագիրը՝ նպատակ ունենալով աջակցել հայ երաժիշտների տաղանդավոր սերնդին և ներդրում ունենալ մշակութային Հայաստանի վաղվա օրվա մեջ:

Երեխաներին աջակցելը ոգեշնչում է նրանց ավելի մոտենալ իրենց երազանքներին: Տեսնելով պատանի երաժիշտների նվիրվածությունն իրենց մասնագիտությանը և կատարելագործվելու ցանկությունը՝ լիահույս եմ, որ այս ծրագիրն էլ ավելի կընդլայնվի, և Հիմնադրամի կրթաթոշակառուները՝ որպես հայկական մշակութային ժառանգության արժեքները կրողներ ու տարածողներ, ամենաբարձր պրոֆեսիոնալ մակարդակով հանդես կգան մեծ բեմերում՝ ներկայացնելով մեր երկիրը:

Հիմնադրամի ծրագրերը կյանքի կոչելն էլ ավելի իրական է դառնում գաղափարակիցների և նվիրյալների հզոր համայնքի աջակցության ու հավատի շնորհիվ: Եկե՛ք միասին հավատանք մեր նախաձեռնած գործին, և վստահ եմ՝ առջևում կունենանք նորանոր ձեռքբերումներ:

**Սերգեյ Սմբատյան**

«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

# ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Հիմնադրամի հիմնական նպատակները դարձան նրա կրթաթական ծրագրի ճանապարհային քարտեզը՝ բացահայտել տաղանդավոր երաժիշտներին, կրթել ու զարգացնել նրանց և արդյունքում ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան երաժիշտներ, որոնք կներկայացնեն հայկական մշակույթն ամբողջ աշխարհում: Հետազոտելով շուկան՝ այսօր կարող ենք փաստել, որ միակ հիմնադրամն ենք, որը հստակ, չափելի արդյունքների է հասցնում իր շահառուներին:

***«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՃԻՆ 6 ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.***

## ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

*Հիմնադրամի կրթաթոշակառուների մասնագիտական աճի համար կազմակերպվում են վարպետության դասեր Հայաստանում և արտերկրում:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԻ

*Աշխարհի լավագույն կատարողական դպրոցների հետ ծանոթության նպատակով կազմակերպվում են այցելություններ համաշխարհային մեծության արտիստների համերգներին:*

## ԲԵՄԱԿԱՆ ՓՈՐՁ

*Բեմական մեծ փորձի ձեռքբերման նպատակով փաղանդներն իրենց ստացած գիտելիքները ցուցադրում են իրենց ելույթներով Հիմնադրամի կողմից կազմակերպված համերգներին Հայաստանում և արտերկրում:*

## ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

*Հաղորդակցության ապահովման նպատակով կազմակերպվում են անգլերենի և ռուսաց լեզվի դասընթացներ:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

*Հայ երաժշտի կարևորագույն առաքելությունն է ճանաչել և կրել հայ մշակութային ժառանգության կարևորագույն արժեքները, ինչի համար և կազմակերպվում են այցելություններ թանգարաններ:*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Տաղանդավոր պատանիները մեկ տարի շարունակ ստանում են նյութական աջակցություն՝ տարեկան կրթաթոշակ Հիմնադրամի կողմից, ինչն ապահովում է լիովին կենտրոնացում մասնագիտության վրա:*

# ԾՐԱԳՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ

Հիմնադրամի 2021/2022թթ. կրթական ծրագիրը նախատեսված էր Հայաստանի երաժշտական և արվեստի դպրոցների և քոլեջների՝ 10-17 տարեկան տաղանդավոր երիտասարդ երաժիշտների համար հետևյալ մասնագիտությունների գծով՝ ջութակ, ալտ, թավջութակ, ֆլեյտա, հոբոյ, կլարնետ, ֆագոտ, գալարափող, շեփոր, տրոմբոն, հարվածային գործիքներ, դաշնամուր և տավիղ:

Ծրագրի գեղարվեստական ղեկավարն է «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահ և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար
և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:



# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԺՅՈՒՐԻԻ ԿԱԶՄ

Հայաստանում և աշխարհում մեծ ճանաչում ունեցող երաժիշտներ



*Վարդան Աճեմյան*



*Էդուարդ Թադևոսյան*



*Վահագն Պապյան*



*Անդրեաս Օտտենզամեր*



*Դմիտրի Յաբլոնսկի*

# ՄԵՐ
# ՏԱՂԱՆԴՆԵՐԸ



# 23 ՇՆՈՐՀԱԼԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ

## 2021 / 2022թթ.– ի կրթաթոշակառուներ



### Անի Մելիքյան

ջութակ

Երևանի Պյոտր Չայկովսկու անվան
միջնակարգ երաժշտական
մասնագիտական դպրոց

**Ուսուցիչ՝ Արթուր Տեր-Հովհաննիսյան**



### Օվսաննա Հարությունյան

ջութակ

Երևանի Պյոտր Չայկովսկու անվան
միջնակարգ երաժշտական
մասնագիտական դպրոց

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր
Բագրատ Վարդանյան**



### Ալինա Աղամյան

ջութակ

Երևանի Պյոտր Չայկովսկու անվան
միջնակարգ երաժշտական
մասնագիտական դպրոց

**Ուսուցիչ՝ Ստելլա Կարապետյան**



## *Հայկ Մարտիրոսյան*

*ջութակ*

*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Արմեն Հարությունյան**



## *Լյանա Ոլիխանյան*

*թավջութակ*

*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Դավիթ Մելքոնյան**
**Ուսուցիչ՝ Արմինե Ավետիսյան**



## *Ալեքս Գրիգորյան*

*թավջութակ*

*Երևանի Ստեփան Զորյանի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Արամ Թալալյան**



## Նարեկ Հեքեքյան

*թավջութակ*

*Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա*

**Դասախոս՝ պրոֆեսոր Արմեն Մեսրոպյան**

*Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց (շրջանավարտ)*

**Ուսուցիչ՝ Տիրուհի Սարգսյան**



## Տիգրան Գասպարյան

*հոբոյ*

*Երևանի Ստեփան Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Ռաֆայել Ոսկանյան**



## Վիկտորյա Պետրոսյան

*ֆլեյտա*

*Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Լուսինե Գալստյան**
**Ղեկավար՝ Գևորգ Ավետիսյան**



## Աիդա Ավանեսյան

*դաշնամուր*

*Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ Կարինե Հարությունյան**



## Հայկ Հեքեքյան

*հոբոյ*

*Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Հարություն Շախկյան**



## Արսեն Բալայան

*կլարնետ*

*Երևանի Միքայել Մալունցյանի անվան արվեստի դպրոց*

**Ուսուցիչ՝ Արտյոմ Լազարյան**



## Սվետլանա Հակոբյան

*դաշնամուր*

*Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ Կարինե Հարությունյան**



## Էդուարդ Չավուշյանց

*դաշնամուր*

*ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Գեորգի Ավանեսով**



## Էդուարդ Գևորգյան

*դաշնամուր*
*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյան**
**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Ռոզալիա Թանդիլյան**

## *2020 / 2021թթ.-ի կրթաթոշակառուներ*



### *Մայա Անիսիմովա*

*ջութակ*

*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյան**



### *Դավիթ Բոյաջյան*

*ջութակ*

*Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Արմեն Բաղդասարյան**



### *Տիգրան Գասպարյան*

*հոբոյ*

*Երևանի Ստեփան Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Ռաֆայել Ոսկանյան**



## *Հայկ Հեքեքյան*

*հոբոյ*

*Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Հարություն Շախկյան**



## *Մարի Հակոբյան*

*թավջութակ*

*Վիեննայի Ամադեուս միջազգային դպրոց և դպրոցին կից ակադեմիա Վիեննայի Արվեստների և Երաժշտության համալսարանի նախապատրաստական կուրս*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Շտեֆան Կրոպֆից**
**Ուսուցիչ՝ Գայանե Ռաֆայելյան**



## *Դավիթ Տոնոյան*

*ֆագոտ*

*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Գարրի Մայիլյան**



*Սաթենիկ Գալստյան*

*գալարափող*

*Երևանի Պյոտր Չայկովսկու անվան
միջնակարգ երաժշտական
մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ պրոֆեսոր Նորի Գալստյան**



*Միհրան Առաքելյան*

*շեփոր*

*ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի Ռոմանոս
Մելիքյանի անվան պետական
երաժշտական քոլեջ*

**Ուսուցիչ՝ Երվանդ Մարգարյան**



## *Սամվել Դավթյան*

*տրոմբոն*

*Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա*

**Դասախոս՝ պրոֆեսոր Պարգև Աղաբեկյան**

*Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց (շրջանավարտ)*

**Ուսուցիչ՝ Հովակիմ Փարսադանյան**



## *Գոռ Սարգսյան*

*դաշնամուր*

*Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց*

**Ուսուցիչ՝ Երևանի պատվավոր մանկավարժ Հասմիկ Հակոբյան**

# ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ



Հիմնադրամի հիմնադիր և Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերգեյ Սմբատյանն իր գեղարվեստական գիտելիքներով և կարողություններով, ճիշտ շեշտադրումներ կատարելով՝ ներգրավել է հանրահայտ երաժիշտների, որոնք՝ որպես Հիմնադրամի դեսպաններ, հետևում են մեր տաղանդների զարգացմանը ծրագրի ամբողջ ընթացքում և վերահսկում են նրանց մասնագիտական աճն ու միջազգային չափանիշներին համապատասխան կրթությունը:

Հիմնադրամի ***2021/2022թթ.*** ծրագրի շրջանակներում հիմնադրամի կրթաթոշակառուների համար ***153*** վարպետության դասեր են անցկացրել աշխարհի տարբեր անկյուններից Հայաստան ժամանած ***55*** հանրահռչակ երաժիշտներ, արտիստներ և պրոֆեսորներ:

Հիմնադրամի կողմից կազմակերպվող վարպետության դասերը բաց են՝ նախատեսված նաև ազատ ունկնդիրների համար, ուստի ծրագրում չընդգրկված պատանիները ևս հնարավորություն ունեն ներկա գտնվել վարպետության դասերին, հաղորդակցվել արտիստների հետ և ստանալ նրանցից արժեքավոր մասնագիտական խորհուրդներ:

2021թ. հոկտեմբերի 1-30-ը հիմնադրամի նախաձեռնությամբ և Մշակույթի աջակցության եվրոպական հիմնադրամի (European Foundation for Support of Culture / EUFSC) աջակցությամբ կազմակերպվել է ***«Երաժշտություն հանուն ապագայի դասական երաժշտության ակադեմիա»*** (Music for Future Classical Music Academy / M4FCMA)՝ վարպետության դասերի և համերգների շարք, որի շրջանակներում վարպետության դասեր են անցկացվել նաև ՝Հիմնադրամի նախորդ տարվա կրթաթոշակառուների և Հիմնադրամի այլ ծրագրերի մասնակից երեխաների համար:

## Հաշվետու ժամանակահատվածում անցկացված վարպետության դասերի ամփոփում

**10** երաժշտական գործիք

**55** երաժիշտ

**153** վարպետության դաս

**23** կրթաօջախ

**6** ոչ կրթաօջախ

# Վարպետության դասեր
# հոկտեմբեր 2021թ.- դեկտեմբեր 2022թ.

| Գործիք | Դասերի քանակ | Արտիստների քանակ | Երեխաների քանակ | Երեխաների քանակ | | Այլ ծրագրում ընդգրկված երեխաներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կրթաթոշակառուներ 2021/2022 | Կրթաթոշակառուներ 2020/2021 | |
| Ջութակ | 63 | 17 | 6 | 4 | 2 | - |
| Թավջութակ | 21 | 11 | 4 | 3 | 1 | - |
| Ֆլեյտա | 3 | 3 | 1 | 1 | 0 | - |
| Հոբոյ | 7 | 4 | 2 | 2 | 2 | - |
| Կլարնետ | 2 | 2 | 1 | 1 | 0 | - |
| Ֆագոտ | 1 | 1 | 1 | 0 | 1 | - |
| Գալարափող | 1 | 1 | 1 | 0 | 1 | - |
| Շեփոր | 1 | 1 | 1 | 0 | 1 | - |
| Տրոմբոն | 1 | 1 | 1 | 0 | 1 | - |
| Դաշնամուր | 53 | 14 | 11 | 4 | 1 | 6 |
| **Ընդամենը** | 153 | 55 | 29 | 15 | 10 | 6 |

# Ի՞նչ են տալիս վարպետության դասերը ծրագրի մասնակիցներին

- ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
- ԱՐԺԵՔԱՎՈՐ ՓՈՐՁ
- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
- ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ
- ՀԵՏԱՔՐՔԻՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ
- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՃ ԵՎ ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ
- ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ
- ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ՊՐՈԴՈՒԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ
- ԵԼՈՒՅԹ ՀԱՅՏՆԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ
- ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ
- ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ



# Կրթաթոշակառուների համար վարպետության դասեր անցկացրած երաժիշտներ

Հիմնադրամի կրթաթոշակառուների համար վարպետության դասեր են անցկացրել մի շարք հանրահայտ երաժիշտներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ճապոնիայից, Կորեայից, Ավստրիայից, Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից, Ֆրանսիայից, Բելգիայից, Հունգարիայից, Իսրայելից, Ուկրաինայից, Ռուսաստանից, Հայաստանից:

## Ջութակ



*Սերգեյ Դոգադին*



*Լավարդ Սկոու-Լարսեն*



*Ժաննա Գանդելման*



*Գրաֆ Մուրժա*



Ֆումիակի
Միուրա



Գիլ
Շահամ



Հայկ
Կազազյան



Դորա
Շվարցբերգ



Մարկ
Բուշկով



Ջոհրաբ
Թադևոսյան



Նիկիտա
Բորիսո-Գլեբսկի



Սերգեյ
Կռիլով



Քրիստոֆ
Բարատի



Ջովանի
Անդրեա Զանոն



Ջուզեպպե
Ջիբբոնի



Նենսի
Ժոու



Կարմինե
Լաուրի

# Թավջութակ



Դմիտրի
Յաբլոնսկի



Ֆելիքս
Կորոբով



Սթիվեն
Իսերլիս



Բրանո
Չո



Օլեգ
Մենդեցկի



Միշա
Մայսկի



Գոթյե
Կապյուսոն



Ալեքսանդր
Ռամմ



Միրիամ
Պրանդի



Սևակ
Ավանեսյան



Անաստասիա
Կոբեկինա

## Ֆլեյտա



Մաքսիմ
Ռուբցով



Նոյեմի
Գյորի



Ջազմին
Չոյ

## Կլառնետ



Անդրեաս
Օտտենզամեր



Ֆաբրիցիո
Մելոնի

## Հոբոյ



Հանսյորգ
Շելլենբերգեր



Մաքսիմ
Կրասնով



Մաքսիմ
Օրեխով



Մարգինե
Վարնիկ

# Դաշնամուր



Պավել
Գիլիլով



Ժան-Պոլ
Գասպարյան



Ջին
Յան



Ռեմի
Ժենյե



Վլադիմիր
Օվչիննիկով



Ջոզեֆ
Մորիս Վեդեր



Սալիմ
Աշքար



Վալենտինա
Լիսիցա



Ֆրեդդի
Քեմպֆ



Վանեսսա
Բենելլի Մոսել



Նիկիտա
Մնդոյանց



Գլորիա
Կամպաներ



Ֆեդերիկո
Կոլլի



Մաքսիմո
Սպադա

# ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ





## *Արդա Ավանեսյան*
*դաշնամուր*

Պավել Գիլիլով
Ժան-Պոլ Գասպարյան
Ռեմի Ժենյե
Ջոզեֆ Մորիս Վեդեր
Ֆրեդդի Քեմպֆ
Գլորիա Կամպաներ
Վանեսսա Բենելլի Մոսել
Ֆեդերիկո Կոլլի
Մասսիմո Սպադա





## *Սվետլանա Հակոբյան*
*դաշնամուր*

Պավել Գիլիլով
Ժան-Պոլ Գասպարյան
Վլադիմիր Օվչիննիկով
Ջոզեֆ Մորիս Վեդեր
Վալենտինա Լիսիցա
Ֆրեդդի Քեմպֆ
Սալիմ Աշքար
Վանեսսա Բենելլի Մոսել
Նիկիտա Մնդոյանց
Ֆեդերիկո Կոլլի





## *Էդուարդ Գևորգյան*
*դաշնամուր*

Պավել Գիլիլով
Ջին Ցան
Վլադիմիր Օվչիննիկով
Ջոզեֆ Մորիս Վեդեր
Վալենտինա Լիսիցա
Ֆրեդդի Քեմպֆ
Ժան-Պոլ Գասպարյան
Գլորիա Կամպաներ
Սալիմ Աշքար
Վանեսսա Բենելլի Մոսելլ
Ֆեդերիկո Կոլլի
Մասսիմո Սպադա




## *Էդուարդ Զավոշյանց*
*դաշնամուր*

Պավել Գիլիլով
Վլադիմիր Օվչիննիկով
Վալենտինա Լիսիցա
Ֆրեդդի Քեմպֆ
Ժան-Պոլ Գասպարյան
Գլորիա Կամպաներ
Սալիմ Աշքար
Վանեսսա Բենելլի Մոսելլ
Նիկիտա Մնդոյանց
Ֆեդերիկո Կոլլի
Մասսիմո Սպադա








## *Ալինա Ադամյան*
*ջութակ*

Լավարդ Սկոու-Լարսեն
Գրաֆ Մուրժա
Ժաննա Գանդելման
Ֆումիակի Միուրա
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ
Նիկիտա Բորիսո-Գլեբսկի
Զոհրաբ Թադևոսյան
Քրիստոֆ Բարատի
Ջովանի Անդրեա Զանոն
Ջուզեպպե Ջիբբոնի
Սերգեյ Կռիլով
Կարմինե Լաուրի





## *Անի Մելիք յան*
*ջութակ*

Լավարդ Սկոու-Լարսեն
Գրաֆ Մուրժա
Ֆումիակի Միուրա
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ
Հայկ Կազազ յան
Նիկիտա Բորիսո-Գլեբսկի
Մարկ Բուշկով
Զոհրաբ Թադևոսյան
Սերգեյ Դոգադին
Քրիստոֆ Բարատի
Ջուզեպպե Ջիբբոնի
Սերգեյ Կռիլով





## *Հայկ Մարտիրոսյան*
## *ջութակ*

Լավարդ Սկոու-Լարսեն
Գրաֆ Մուրժա
Ժաննա Գանդելման
Ֆումիակի Միուրա
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ
Հայկ Կազազ յան
Նիկիտա Բորիսո-Գլեբսկի
Մարկ Բուշկով
Քրիստոֆ Բարատի
Ջուզեպպե Ջիբբոնի







## *Օվսաննա Հարությունյան*
## *ջութակ*

Լավարդ Սկոու-Լարսեն
Գրաֆ Մուրժա
Ժաննա Գանդելման
Ֆումիակի Միուրա
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ
Հայկ Կազազ յան
Զոհրաբ Թադևոսյան
Սերգեյ Դոգադին
Քրիստոֆ Բարատի
Ջովանի Անդրեա Զանոն
Մարկ Բուշկով
Նեննի Ժոու
Սերգեյ Կռիլով





## *Ալեքս Գրիգորյան թավջութակ*

Դմիտրի Յաբլոնսկի
Ֆելիքս Կորոբով
Օլեգ Սենդեցկի
Ալեքսանդր Ռամմ
Բրանոն Չո
Միշա Մայսկի






## *Նարեկ Հեքեք յան թավջութակ*

Դմիտրի Յաբլոնսկի
Ֆելիքս Կորոբով
Սթիվեն Իսերլիս
Միրիամ Պրանդի
Գոթյե Կապյուսոն
Միշա Մայսկի
Սևակ Ավանեսյան
Անաստասիա Կոբեկինա






## *Լյանա Ուլիխանյան թավջութակ*

Ֆելիքս Կորոբով
Օլեգ Սենդեցկի
Ալեքսանդր Ռամմ
Բրանոն Չո
Միշա Մայսկի



## *Վիկտորյա Պետրոսյան*
*ֆլեյտա*

Մաքսիմ Ռուբցով
Նոյեմի Գյորի
Ջազմին Չոյ



## *Հայկ Հեքեքյան*
*հոբոյ*

Մաքսիմ Կրասնով
Մարտինե Վարնիկ
Հանսյորգ Շելլենբերգեր
Մաքսիմ Օրեխով



## *Տիգրան Գասպարյան*
*հոբոյ*

Մաքսիմ Կրասնով
Մարտինե Վարնիկ
Հանսյորգ Շելլենբերգե



## *Արսեն Բալայան*
*կլարնետ*

Անդրեաս Օտտենզամեր
Ֆաբրիցիո Մելոնի

# Վարպետության դասեր Հիմնադրամի նախորդ տարվա կրթաթոշակառուների համար





## Այա Անիսիմովա
## ջութակ

Սերգեյ Դոգադին
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ





## Մարի Հակոբյան
## թավջութակ

Ֆելիքս Կորոբով
Սթիվեն Իսերլիս



## Գոռ Սարգսյան
## դաշնամուր

Ջին Յան
Վլադիմիր Օվչիննիկով
Ջոզեֆ Մորիս Վեդեր



## Դավիթ Բոյաջյան
## ջութակ

Սերգեյ Դոգադին
Գիլ Շահամ
Դորա Շվարցբերգ
Ջոհրաբ Թադևոսյան





# Վարպետության դասեր Հիմնադրամի ոչ կրթաթոշակառուների համար






**Աստղիկ Ղուկասյան**
դաշնամուր

Պավել Գիլիլով





**Արիանա Կարապետյան**
դաշնամուր

Պավել Գիլիլով





**Մարգարիտա Միքաելյան**
դաշնամուր

Պավել Գիլիլով





**Վալերի Պոլոյան**
*դաշնամուր*

Պավել Գիլիլով





**Մարի Փոշոպյան**
*դաշնամուր*

Ջին Յան





**Գառնիկ Մարյան**
*դաշնամուր*

Ջին Յան

# Վարպետության դասեր Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստերների հետ






**Դավիթ Տոնոյան**
*ֆագոտ*

Նիկոլայ Պողոսյան





**Սաթենիկ Գալստյան**
*գալարափող*

Արմեն Կարագյան






**Միհրան Առաքելյան**
*շեփոր*

Տիգրան Ավագյան





**Սամվել Դավթյան**
*տրոմբոն*

Վահրամ Դավթյան

## *SeeSharp Workshop*
## *“Fight your frights and focus your emotions”*

Բացի վարպետության դասերից Հիմնադրամի կրթաթոշակառուների համար կրեատիվ մտածողության զարգացմանը և բեմական վախերի ու անհանգստության կառավարմանն ուղղված սեմինար (C# SeeSharp Workshop “Fight your frights and focus your emotions”) է անցկացրել իտալացի հանրահայտ դաշնակահարուհի Գլորիա Կամպաները:

Սեմինարի նպատակն է նախապատրաստել մասնակիցներին հաղթահարել սթրեսային իրավիճակները, որոնք կարող են դրսևորվել համերգներից, քննություններից, մրցույթներից, հանրային ելույթներից առաջ, չվախենալ սխալվելուց, օգնել նրանց դառնալ ավելի համարձակ հանդիսատեսին հանդիպելիս և չվախենալ բեմից:

Նախորդ տարի սեմինարն անցկացվել է առցանց տարբերակով, իսկ այս տարի երեխաները հնարավորություն են ունեցել հանդիպել և շփվել դաշնակահարուհու հետ, լսել բազմաթիվ օրինակներ և խորհուրդներ նրա կյանքից, փոխանակել մտքեր և խաղային ձևաչափով եզրափակել սեմինարը:



# ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐ

## *Նիկիտա Մնդոյանց*

Սա չափազանց կարևոր առաքելություն է, և ես ուրախ եմ, որ կա այնպիսի կազմակերպություն, ինչպիսին է «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը, որը համապարփակ մոտեցմամբ աջակցում է երիտասարդ տաղանդավոր երաժիշտներին իրենց զարգացման ուղում և օգնում նրանց կերտել իրենց գեղարվեստական անհատականությունը:

Երեխաները բոլորն ունեն շատ ամուր հիմք, գիտելիքներ ու հմտություններ, որոնց շնորհիվ կարողանում են կլանել և ընդունել բոլոր խորհուրդները, դիտարկումները: Նրանք բաց են լսելու նոր մտքեր և մոտիվացված են զարգացնելու իրենց արվեստը: Մեծ պատասխանատվություն է օգնել նրանց գտնել իրենց ճիշտ ուղին երաժշտական աշխարհում:



## Մարկ Բուշկով

Երիտասարդ սերունդներին օգնելու և նրանց կրթությունն առավել խոստումնալից և պրոֆեսիոնալ կերպով կազմակերպելու նախաձեռնությունն իրական երաժշտական ապագա կրթելու բանալի է ինչպես կատարողների, այնպես էլ ունկնդիրների համար: Հասանելիությունը դեպի տարբեր տեսակի տեղեկատվություն օգնում է երիտասարդ սերնդին ավելի մեծ փորձ և պատկերացում ունենալ այն մասին, թե ինչ է այսօր դասական երաժշտությունը:

Ես շատ հաճելիորեն զարմացած եմ՝ տեսնելով փայլող աչքեր, որոնք լի են հույսով և նվիրվածությամբ դեպի երաժշտությունը: Նրանք ընդունակ են լսել և ըմբռնել ճիշտը, այսինքն՝ ունեն տաղանդ և առաջընթացի նախատրամադրվածություն:



## Ժան-Պոլ Գասպարյան

Չափազանց դրական եմ գնահատում Հիմնադրամի կողմից երիտասարդ երաժիշտներին ցուցաբերվող աջակցությունը: Վարպետության դասը նրանց համար և՛ մարտահրավեր է, և՛ հմտանալու, հարստանալու հնարավորություն: Մարտահրավեր է, քանի որ այն դրդում է նրանց հասնել պատրաստվածության ամենաբարձր մակարդակի, որպեսզի կարողանան ներկայանալ այլ մարդկանց առջև: Սա ենթադրում է մեծ ջանքեր և կարգապահություն, որոնք էլ միշտ տանում են դեպի կատարելագործում:

Վարպետության դասը նաև հարստացնում է մարդուն, քանի որ այն մշակութային և գեղարվեստական փոխանակում է. դասերի ընթացքում լսում ես նոր դիտողություններ, մեկնաբանություններ, առաջարկներ, օրինակներ, որոնք, հուսանք, որ մասնակիցներին կտան նոր գաղափարներ:





## Ռեմի Ժենյե

Ուրախ էի տեսնել այն աջակցությունը, որը Հիմնադրամը ցուցաբերում է Հայաստանի երիտասարդ երաժիշտներին:

Նոր տաղանդներին օգնելը կարևորագույն դեր ունի մեր գեղարվեստական մշակույթը հավերժացնելու գործում, և նույնիսկ եթե ոչ ոք չի կարող փոխարինել մեր ուսուցչին, համոզված եմ, որ վարպետության դասերը կարող են տարբեր հեռանկարներ ստեղծել երիտասարդ երաժիշտների զարգացման համար:

Հաճույքով կրկին վարպետության դասեր կանցկացնեմ երեխաների համար:



## Վանեսսա Բենելլի Մոսել

Կարծում եմ՝ հրաշալի է, երբ հրավիրվող արտիստը ունենում է նաև հնարավորություն հանդիպել տեղի երիտասարդների հետ՝ որպես ուսուցիչ:

Դա հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տարբեր երկրներում կատարողական մակարդակի մասին: Վարպետության դասերի մասնակիցները շատ տարբեր են, բայց բոլորն էլ ունեն որակներ, որոնք պետք է տարբեր ձևով զարգացնեն: Նրանք գնալու են կյանքի տարբեր ուղիներով, և պրոֆեսիոնալ արտիստի համար շատ հուզիչ է նման շփում ունենալ երիտասարդ սերնդի հետ:



## Ֆրեդդի Քեմպֆ

Ես սիրում եմ դասավանդել, հատկապես՝ երեխաներին, ուստի ուրախ եմ դառնալ ծրագրի մի մասը և աջակցել հայ տաղանդաշատ երիտասարդներին:

Հուսով եմ, որ կարողացա ոգեշնչել երեխաներին: Հաճախ եմ հիշում այն ժամանակները, երբ ինքս երեխա էի, ելույթ էի ունենում ու աշխատում հայտնի երաժիշտների հետ, և որքան մոտիվացնող էր դա ինձ համար: Ուստի փորձեցի նույնը տալ նաև երեխաներին մեր վարպետության դասերի շրջանակներում:



## Ջովանի Անդրեա Զանոն

Շատ կարևոր և արժեքավոր է ներդրումներ կատարել երիտասարդ սերնդի զարգացման մեջ, տալ նրանց հնարավորություն միշտ կապված լինել երաժշտությանը և հարստացնել իրենց գիտելիքները: Ուստի ուրախ եմ աշխատել Հիմնադրամի հետ և աջակցել երիտասարդ երաժիշտներին:

Նկատեցի, որ հայ պատանիները լի են սովորելու ցանկությամբ և ձգտումով: Երիտասարդ երաժշտի համար կարևոր է լինել լայնախոհ, իսկ երեխաների հետաքրքրասիրությունն ակնհայտ է:



## Ֆեդերիկո Կոլլի

Ուշագրավ է, թե ինչ աշխատանք է կատարում Հիմնադրամը երեխաների համար: Շատ տպավորված եմ երեխաների հետաքրքրասիրությամբ և սովորելու, կատարելագործվելու, բացահայտելու նրանց մեծ ցանկությամբ: Զգացվում է նրանց մեծ սերը դեպի երաժշտությունը և դաշնամուրը:

Հայաստանը հրաշալի երկիր է՝ լի ավանդույթներով, հիանալի մշակույթով և ուժեղ ինքնությամբ: Վստահ եմ, որ հայ երաժիշտների հաջորդ սերունդը կկարողանա իր մեկնաբանությամբ ցույց տալ իր երկրի այս բոլոր գեղեցիկ կողմերը:



## Բրանոն Չո

Մշակութային հզոր հիմնադրամի և արվեստի ամուր հիմքի առկայությունը երեխաներին մեծ հնարավորություններ է տալիս կենտրոնանալ իրենց աշխատանքի վրա նաև իրենց ամենօրյա կրթությունից դուրս: Երիտասարդները կարող են միասին սովորել, մեծանալ և զարգացնել երաժշտության հանդեպ սերը՝ միասին հաճախելով համերգների և մասնակցելով վարպետության դասերի: Սա մի բան է, որ ես ինքս կցանկանայի ունենալ ավելի երիտասարդ տարիքում:

Հիմնադրամի կրթաթոշակառուները մեծ սեր ունեն երաժշտության նկատմամբ և արդեն կարողանում են հույզեր արտահայտել ու փոխանցել երաժշտության միջոցով: Սա շատ հազվադեպ է պատահում այդքան երիտասարդ տարիքում:



## Հանսյորգ Շելլենբերգեր

Մենք՝ հայտնի երաժիշտներս, պարտավոր ենք մեր ողջ փորձը փոխանցել երիտասարդ տաղանդավոր երաժիշտներին։ Ինձ զարմացրին և հիացրին ձեր հոբոյահար տղաների ելույթները։ Նրանք արդեն տեխնիկական բարձր մակարդակի են հասել և ունեն իրենց հստակ պատկերացումը, թե ինչպես արտահայտել երաժշտությունը։

Հուսով եմ, որ շուտով կվերադառնամ Երևան՝ նվագախմբի հետ համերգի շրջանակներում, և ավելի շատ դասեր կանցկացնեմ այս երիտասարդ երաժիշտների համար, կամ էլ նրանք կկարողանան գալ ինձ մոտ՝ “Musikforum Sachrang”-ի շրջանակներում վարպետության դասերի մասնակցելու։



## Ջազմին Չոյ

Այն կազմակերպությունը, որն ամենապրոֆեսիոնալ կերպով ներդրում է կատարում երիտասարդների երաժշտական ուսումնառության գործում, ամենամեծ նվերն է մատուցում նրանց։ Տարիների ընթացքում ես հանդիպել եմ բազմաթիվ ֆանտաստիկ հայ երաժիշտների՝ ջութակահարների, թավջութակահարների, դաշնակահարների, երգիչների, բայց երբեք չէի հանդիպել հայ ֆլեյտահարի։

Որպես ուսուցիչ, երբ սովորեցնում և ուղղորդում եմ երիտասարդներին, կարծում եմ, որ ամենակարևորը նրանց պատրաստակամությունն է՝ թե որքան է աշակերտը ցանկանում ընկալել և որքան շատ է նա ցանկանում զբաղվել երաժշտությամբ։ Ձեր կրթաթոշակառուի պարագայում ակնհայտ է նրա երաժշտականությունը, սովորելու մեծ ցանկությունը և արագ կողմնորոշվելու, շտկումներ կատարելու կարողությունը։



## *Հայկ Կազազյան*

Հայ երեխաներն շատ տաղանդավոր են, և վարպետության դասի ժամանակ մեկ անգամ ևս համոզվեցի դրանում: Կարևոր է սիրել այն, ինչ անում ես, լինել ոգով ուժեղ, երբեք չընկճվել, եթե ինչ-որ տեղ անհաջողության ես հանդիպում, և ճիշտ, ադեկվատ գնահատես ուժերդ: Պետք է ունենալ էնտուզիազմ, ցանկություն և նպատակ՝ ճանապարհին հաղթահարելով բոլոր խոչընդոտները, և իմանալ, թե ինչպես պարապել՝ ուղեղով, մտածված և արդյունավետ:

Շնորհակալություն Սերգեյ Սմբատյանին երեխաներին աջակցելու այս գաղափարի և նրանց ոգեշնչելու համար: Լավ է, որ արդեն այս տարիքում երեխաները այսքան ինֆորմացիա և ֆինանսական օժանդակություն են ստանում: Կարևոր է, որ երեխաների ուսուցիչները ևս ներկա լինեն վարպետության դասերին՝ այլ տեսակետներ, մոտեցումներ, մտքեր լսելու, տեսնելու և ստանալու համար:



## *Սերգեյ Դոգադին*

Երիտասարդները մեր ապագան են, ուստի շատ կարևոր է բավականաչափ ժամանակ և ուշադրություն ուղղել նրանց: Շատ եմ հարգում Սերգեյ Սմբատյանին՝ որպես մարդ և որպես երաժիշտ, իսկ նրա կողմից Հիմնադրամի ստեղծումը ֆենոմենալ նախաձեռնություն է, հիանալի գաղափար, որն անպայման պետք է իրագործել: Սա երիտասարդների մոտ սերմանում է սեր դեպի երաժշտություն և ավելի լավը լինելու ձգտում:

Իսկ իմ խորհուրդը երեխաներին կլինի այն, որ եթե նույնիսկ մրցույթներում, համերգների ընթացքում կամ որևէ այլ տեղ ինչ-որ անհաջողությունների են բախվում, ապա, եթե իսկապես սիրում են իրենց գործը և նվիրված են դրան, պետք չէ կանգ առնել ոչ մի դեպքում, այլ առաջ շարժվել և միշտ փորձել վերլուծել այն, ինչ անում են: Դրա համար երեխային անհրաժեշտ են լավ ուսուցիչ, վարպետության դասեր և օժանդակություն, քանի որ այդ ամենն ինքնուրույն չի տրվում:



## Լավարդ Սկոտ-Լարսեն

Ամբողջ աշխարհում անհրաժեշտ է ներդրումներ կատարել մշակույթի մեջ: Մշակույթի միջոցով հասկանում ես կյանքը: Եթե հասկանում ես կյանքը, հասկանում ես ամեն ինչ, իսկ եթե չես հասկանում կյանքը, դու սխալներ ես գործում: Ներդրումը մշակույթի ցանկացած ճյուղի մեջ՝ լինի դա երաժշտություն, նկարչություն, թատրոն կամ գրականություն, լավագույնն է, ինչ կարող ես անել: Ուստի, հրաշալի աշխատանք եք անում այս նախաձեռնության միջոցով:

Երեխաներին խորհուրդ կտայի պարզապես շարունակել նույն ոգով: Նրանք լուրջ են տրամադրված և լավ ձեռքերում են:



## Պավել Գիլիլով

Հիմնադրամի երեխաներն ունեն լավ նախադրյալներ, իսկ ավելի մրցունակ դառնալու համար նրանց պետք է օգնել, հնարավորություն տալ նվագել, մասնակցել մրցույթների: Երաժշտությունը խոսք է, եթե ճիշտ չես արտահայտում, ստորակետներ չես դնում, ապա միանգամայն անհասկանալի բան է ստացվում: Կարդալու մշակույթը, ձայնի մշակույթը, հնչյունների բազմազանությունը, արտահայտչականության մշակույթը՝ այս ամենը պետք է ճիշտ հասկանալ: Ուստի, իհարկե, երեխաներին անհրաժեշտ է օգնել այս հարցում:

Երբ աշխատում եմ իմ դասարանի հետ, այն նման է լաբորատորիայի: Ես փորձում եմ նրանց տանել դեպի համակարգային մտածողություն, թե ինչպես հասկանալ իրերը: Օրինակ՝ կարդալու մշակույթն ինձ համար մեծ արվեստ է, որովհետև մեկը կարող է նայել պարտիտուրային և իրականում ոչինչ չտեսնել, իսկ փորձառու մարդն անմիջապես հասկանում է, թե որտեղ են գլխավոր կետերը:



## Ջին Յան

Առաջին անգամ եմ Հայաստանում և հայտնաբերեցի, որ մարդիկ իսկապես սիրում են երաժշտությունը, և այդ երաժշտական ավանդույթն ու մշակույթն իրենց արյան մեջ են: Որպես ուսուցիչ՝ կարող եմ ասել, որ երեխաները շատ ջանասիրաբար աշխատում են ու պարապում: Սա շատ կարևոր հատկանիշ է դաշնակահարի ապագայի համար, քանի որ անկախ նրանից, թե ինչքան տաղանդավոր ես, միշտ պետք է լինել աշխատասեր:

Երեխաներին խորհուրդ կտամ օգտագործել բոլոր հնարավորությունները՝ այս մեծ աշխարհը տեսնելու համար՝ այցելել այլ երկրներ, շփվել իրենց տարիքի դաշնակահարների հետ, ովքեր այլ երկրների և մշակույթների ներկայացուցիչներ են, սովորել միմյանցից և իսկապես ճանաչել աշխարհը: Սա ևս մեկ հիմնարար որակ է լավ և միջազգային դաշնակահարի համար, բացի աշխատասիրությունից:
Հույս ունեմ, որ այս ծրագիրը կկարողանա երեխաների հետ միասին մեծանալ և դրական ազդեցություն ունենալ երիտասարդ սերնդի վրա՝ սրանով իսկ նպաստելով Հայաստանի մշակութային զարգացմանը:



## *Մաքսիմ Ռուբցով*

Ես հաճույքով կկիսվեցի Հիմնադրամի ֆլեյտահար կրթաթոշակառուի հետ իմ գիտելիքներով, գաղտնիքներով, որովհետև տեսնում եմ, որ իմաստալից պարապմունքների դեպքում նա երաժշտության մեջ ստեղծագործական մեծ ապագա կունենա: Խորհուրդ կտայի երեխային ավելի շատ երգել: Օդի ճիշտ մատուցումը, ձայնի ճիշտ պրոյեկցիան անհրաժեշտ դետալներ և առանձնահատկություններ են, որոնք օգնում են երաժշտին, մենակատարին նվագել և ճիշտ արտահայտել իր երաժշտական մտքերը ցանկացած լսարանում:

Ապագա սերունդը պետք է զարգանա երաժշտական մշակույթում և ճիշտ մեթոդիկայով: Շնորհակալություն եմ հայտնում Սերգեյ Սմբատյանին այս վարպետության դասն անցկացնելու հնարավորության համար, և պետք է խոստովանեմ, որ Հիմնադրամի գործունեությունն աներևակայելի կարևոր է, իսկ այս երկխոսությունը սերունդների միջև՝ անհրաժեշտ: Ցանկանում եմ Հիմնադրամին բարգավաճում:





## Ցումիակի Միուրա

Հիանալի է, որ կա երեխաների երաժշտական կրթությանը նպաստող նման աջակցություն: Կարծում եմ՝ եթե շարունակել այսպես՝ վարպետության դասեր, հանդիպումներ հրաշալի երաժիշտների հետ ամբողջ աշխարհից, ապա սա կլինի իսկապես անգնահատելի և խիստ կարևոր աջակցություն երեխաների համար:

Ես հիացած եմ այն երեխաներով, ում հետ դաս ունեցա: Կցանկանայի, որ նրանք շարունակեն վայելել կյանքը. ոմանք սիրում են միայն պարապել, իսկ ես խորհուրդ կտայի նաև փորձել այլ բաներ՝ աշխարհը ճանաչելու համար:



## Ժաննա Գանդելման

Երբ երաժշտությունը և երաժշտություն պարապելը խրախուսվում է բարձր մակարդակով, երբ կա նպատակ՝ ինչ-որ բան կառուցելու և ստեղծելու, դա հրաշալի է:

Երեխաները բոլորն էլ ինձ զարմացրին և հուզեցին. շատ երաժշտական են, և ամենահաճելին այն է, որ նրանք սիրում են այն, ինչ անում են: Չես զգում, որ դա իրենց համար պարտավորվածություն է, այլ զգում ես վերաբերմունք և սեր, ուստի ինձ համար շատ հաճելի և հետաքրքիր էր պարապել երեխաների հետ:



## *Վլադիմիր Օվչիննիկով*

Արտիստների, ուսուցիչների և ուսանողների ցանկացած հանդիպումը միշտ էլ օգտակար է երկու կողմի համար էլ, քանի որ դրանք միշտ նոր հանդիպումներ են, նոր տպավորություններ, և, ամենակարևորը, երեխաներին միշտ կարող ես ինչ-որ կերպ օգնել: Կարծում եմ՝ այս նոր հանդիպումները միշտ էլ ինչ-որ աշխուժություն են բերում իրենց հետ:

Ցանկացած ուսուցիչ, նույնիսկ ամենալավը, ժամանակի ընթացքում մոտավորապես նույն բաների մասին է խոսում: Երեխաների համար պետք է լինի գոնե մի քիչ նոր, թարմ կարծիք նույն բանի վերաբերյալ: Գլխավորն այն է, որ գործընթացը զարգացում ապրի, չէ որ մենք ոչ թե փիլիսոփայությամբ ենք զբաղվում, այլ «խաղով», իսկ խաղը պետք է լինի խելացի կամ վառ, պայծառ: Մենք աշխարհը ճանաչում ենք խաղի միջոցով, խաղի միջոցով հետաքրքիր է, իսկ եթե երեխաներին ասես՝ սա պետք է այսպես անել կամ չանել, դա բոլորովին այլ է: Այստեղ կարևոր է, որ նրանք ամեն ինչ ընկալեն և՛ պարզ ձևով, և՛ հետաքրքրությամբ, և ամենակարևորը, որ կարողանան ասել իրենց խոսքը, ոչ թե կրկնեն ինչ-որ մեկի բառերը: Հետևաբար, նրանց պետք է հրահրել, հուշել, որպեսզի նրանք կարողանան նաև ստեղծագործել:





## *Ֆելիքս Կորոբով*

Ինձ դուր է գալիս այն ամենը, ինչ անում է Սերգեյ Սմբատյանը, նա շատ հետաքրքիր շարժիչ ուժ ունի: Մարդիկ բաժանվում են երկու խմբի. նրանք, ովքեր խոսում են, և նրանք, ովքեր գործում են: Սերգեյը պատկանում է այն մարդկանց թվին, ովքեր գործում են: Հիմնադրամի երեխաները շատ բախտավոր են, որ նրանց հետ այսպիսի աշխատանք է տարվում, նրանք հնարավորություն ունեն նվագել, պարապել, սովորել, վարպետության դասեր ունենալ, համերգների հաճախել և ելույթներ ունենալ: Կարող ես ինչքան ուզում ես պարապել տանը, բայց երաժիշտը, միևնույն է, դաստիարակվում է բեմում: Եվ բոլոր սխալները, որոնք կարելի է թույլ տալ, և՛ բոլոր սխալները, որոնք հնարավոր է ուղղել, դրանք արվում են միայն բեմում:

Այս երեխաներն անկասկած կդառնան ինչ-որ աստղիկներ, եթե շարունակեն աշխատել, քանի որ մենք այնպիսի մասնագիտություն ունենք, որը պահանջում է անընդհատ աշխատանք: Եվ պետք է անընդհատ ներդնել նրանց զարգացման մեջ և զբաղվել նրանց հետ, այդ դեպքում որոշ ժամանակ անց դա կտա իր արդյունքը:



## Գիյ Շահամ

Շատ ոգեշնչված եմ Մաեստրո Սերգեյ Սմբատյանի և այս Հիմնադրամի աշխատանքով: Սա իսկապես հրաշալի նախաձեռնություն է: Երաժշտարվեստի մեջ կա մի բան, որով մենք բոլորս լցվում ենք, և մենք շատ բախտավոր ենք, որ աջակիցներ ունենք:
Ես վարպետության դասեր ունեցա երաժշտությունը սիրող և երաժշտության նկատմամբ լուրջ տրամադրված պատանիների հետ, ինչի համար շատ ուրախ եմ: Այս արվեստը փոխանցվել է մեզ սերնդեսերունդ, և շատ զգացված եմ՝ տեսնելով, որ այն շարունակաբար փոխանցվում է նաև հաջորդ սերնդին:

Իմ խորհուրդն է երեխաներին՝ շարունակել զբաղվել երաժշտությամբ: Իհարկե, այն կապված է անընդհատ պարապելու հետ, շատ աշխատատար է, բայց նրանք նաև չպետք է վախենան նոր բաներ փորձելուց, ոչ ստանդարտ մտածելուց, պետք է հաճախեն շատ դասերի ու համերգների, լսեն տարբեր երաժիշտների և պարզապես շարունակեն ապրել երաժշտության մեջ:



## *Դորա Շվարցբերգ*

Շատ ուրախ եմ, որ ճանապարհորդում եմ տարբեր երկրներով և հանդիպում եմ տարբեր մարդկանց: Շատ եմ գնահատում այն ուսուցիչների, պրոֆեսորների աշխատանքը, ովքեր պարապում են երեխաների հետ և շարունակում են սովորեցնել: Որքան տաղանդավոր են երեխաները, այնքան շատ անելիքներ կան նրանց հետ անելու: Եվ գաղափարապես ինձ շատ է դուր գալիս, որ ներդրում է կատարվում կրթության և դասավանդման մեջ: Երիտասարդ սերունդը կարող է փորձել շարունակել ավանդույթները: Երբ ես սովորում էի Մոսկվայի կոնսերվատորիայում, քայլում էիր միջանցքով և հանդիպում Օյստրախին, Կոգանին, Ռոստրոպովիչին՝ մարդկանց, ովքեր պատմություն էին կերտում: Նրանց փոխարինել անհնար է, բայց կարելի է նրանց սիրել և փորձել շարունակել ավանդույթները: Կարևորը սիրելն ու հասկանալն է, որ երաժշտությունը նույնպես ինչ-որ մի մեծ բանի մասն է: Դասական երաժշտությունը շատ երկար «զրույց» է:

Մենք պետք է սիրենք դասական երաժշտությունը և պահենք այն մեր սրտերում: Սերը գլխավորն է: Ես ցանկանում եմ, որ նրանք, ում ես սովորեցնում եմ, վայելեն երաժշտությունը, հաճույք ստանան, որը նրանք ոչ մի այլ բանից չեն ստանա:



# ԲԵՄԱԿԱՆ ՓՈՐՁ

Յուրաքանչյուր երաժշտի կյանքում ամենակարևոր դերն ու նշանակությունն ունի բեմը՝ հանդիսատեսի առջև լավագույնս ելույթ ունենալու առաքելությամբ

2021/2022թթ. ծրագրի շրջանակներում կրթաթոշակառուներն ունեցել են 16 համերգ Հայաստանում և արտերկրում:



# *«Շնորհալի Հայաստան» 3-օրյա համերգաշար՝*

«Երաժշտություն հանուն ապագայի» դասական երաժշտության ակադեմիայի շրջանակներում

***27, 28 և 29 հոկտեմբերի, 2021թ.***

Արամ Խաչատրյանի տուն-թանգարան







## *Համերգ մանկապարտեզի երեխաների համար*

***20 հունիսի, 2022թ.***

Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն

## *Գործընկերային համերգ*

***13 հուլիսի, 2022թ.***

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ (Armenian Missionary Association of America (AMAA) Armenia branch)









## *Գործընկերային համերգ*

***22 հուլիսի, 2022թ.***

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն





## *Վլադիմիր Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի «Մոսկվան դիմավորում է ընկերներին» XIX միջազգային փառատոն («Москва встречает друзей» XIX международный фестиваль*

***1 հոկտեմբերի, 2022թ.***

Հանդիսավոր բացում
Մոսկվայի միջազգային երաժշտության տուն, Սվետլանովսկի համերգասրահ (Светлановский зал Московского международного Дома музыки)

«Մոսկվայի վիրտուոզներ» պետական կամերային նվագախումբ (Государственный Камерный оркестр «Виртуозы Москвы»)

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝
***Վլադիմիր Սպիվակով***

Մասնակից կրթաթոշակառու՝
***Հայկ Հերերյան*** – Խաչատրյան. Սուսերով պար «Գայանե» բալետից





*2 հոկտեմբերի, 2022թ.*

Ռուսական իմպրեսիոնիզմի թանգարան (Музей русского импрессионизма)

Մասնակից կրթաթոշակառու՝
***Էդուարդ Զավոշյանց*** – Ռախմանինով. Էտյուդ պատկեր թիվ 9, երկ 39


Департамент культуры города Москвы
Под патронатом
ГЕНЕРАЛЬНЫЙ ПАРТНЁР
MOSCOW MEETS FRIENDS INTERNATIONAL FESTIVAL
Рождённые заново!
XIX Международный фестиваль
МОСКВА ВСТРЕЧАЕТ ДРУЗЕЙ
2022
THE VLADIMIR SPIVAKOV INTERNATIONAL CHARITY FOUNDATION
СВИДЕТЕЛЬСТВО
Алекс ГРИГОРЯН
г. Ереван, Армения
является участником
Президент фонда Владимир Спиваков
www.spivakov.ru
Партнеры МБФ Владимира Спивакова
АЭРОФЛОТ
Технологии Доверия
РОССИЯ К

*6 հոկտեմբերի, 2022թ.*

Առցանց համերգ
Հեռարձակում Spivakov Foundation յութուբյան ալիքով

Մասնակից կրթաթոշակառու
***Ալեքս Գրիգորյան*** – Բաբաջանյան. Վոկալիզ






*8 հոկտեմբերի, 2022թ.*

Առցանց համերգ
Հեռարձակում Spivakov Foundation Յութուբյան ալիքով

Մասնակից կրթաթոշակառուներ՝
*Սվետլանա Հակոբյան* – Չայկովսկի-Պլետնյով. Անդանտե-Մաեստոզո Մարդուկ-ջարդուկ սյուիտից

*Անի Մելիքյան* – Վենյավսկի. Սկերցո տարանտելլա

*Էդուարդ Գևորգյան* – Սկրյաբին. 2 պոեմ, երկ 32

*9 հոկտեմբերի, 2022թ.*

Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիա, Ռախմանինովի անվան դահլիճ (Московская государственная консерватория им. П.И.Чайковского, Рахманиновский зал)

*Մասնակից կրթաթոշակառու՝*
Աիդա Ավանեսյան – Լիստ. Տրանսցենդենտալ էտյուդ թիվ 8





## *Վլադիմիր Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի կրթաթոշակառուների և համերգային ծրագրերի մասնակիցների համերգ*

***18 սեպտեմբերի, 2022թ.***

«Зарядье» համերգասրահ, փոքր դահլիճ, ք. Մոսկվա

Մասնակից կրթաթոշակառուներ՝
***Վիկտորյան Պետրոսյան*** – Ֆորե. Ֆանտազիա ֆլեյտայի և դաշնամուրի համար, երկ 79

***Լյանա Ուլիխանյան*** – Բաբաջանյան. Արիա Վոկալիզ

***Օվսաննա Հարությունյան*** – Սեն-Սանս.Ինտրոդուկցիա և ռոնդո կապրիչիոզո, լ յա մինոր, երկ 28







*20 նոյեմբերի, 2022թ.*

«Звёзды на утреннем небе». Свет надежды. Абонемент «Дети-детям. услышать будущего зов»
Մոսկվայի միջազգային երաժշտության տուն (Московский международный Дом музыки-ММДМ), կամերային դահլիճ

Մասնակից կրթաթոշակառուներ՝
***Տիգրան Գասպարյան*** – Պալադի. Կոնցերտանտե

***Արսեն Բալայան*** – Պուլենկ. Սոնատ դաշնամուրի և կլարնետի համար, 3-րդ մաս









## *2021/2022թթ. կրթաթոշակառուների պարեվերջյան ամփոփիչ համերգ*

***12 հոկտեմբերի, 2022թ.***

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն





## *Համերգ՝ նվիրված բանկային աշխատողի օրվան*

***22 նոյեմբերի, 2022թ.***

«Առնո Բաբաջանյան» համերգասրահ



*Համերգների ընթացքում երեխաները բացի անհատական ելույթներից հանդես են եկել նաև համապեղ կատարումներով և կատարել են Արամ Խաչատրյանի «Ուզունդարա» ստեղծագործությունը «Գայանե» բալետից և Գրիգոր Եղիազարյանի «Ոսկե ձկնիկի պարը» «Սևան» բալետից՝ կոմպոզիտոր Վահագն Վարդանյանի փոխադրությամբ:*

# Կրթաթոշակառուների ամանորյա համերգ

*Դեկտեմբերի 22, 2022թ.*

«Արամ Խաչատրյան» համերգասրահ
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝
***Սերգեյ Սմբատյան***

Մասնակիցներ՝ ***Հիմնադրամի կրթաթոշակառուներ***

Առաջին անգամ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կրթաթոշակառուները համատեղ համերգով հանդես են եկել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, որտեղ  բացի անհատական ելույթներից կատարել են նաև Արամ Խաչատրյանի Վալսը «Դիմակահանդես» դրամայի երաժշտությունից





# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԻ



Հիմնադրամի կրթաթոշակառուները հնարավորություն ունեն անվճար ներկա գտնվել աշխարհի լավագույն կատարողական դպրոցների ներկայացուցիչների համերգներին և ունկնդրել իրենց հետ վարպետության դասեր անցկացրած արտիստների կատարումները մեծ բեմում: Հիմնադրամի 2021/2022թթ. ծրագրի շրջանակներում կրթաթոշակառուներն ունկնդրել են թվով 64 համերգ, որոնք անց են կացվել «Արամ Խաչատրյան» համերգասրահում, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կոմիտասի թանգարան- ինստիտուտում:





*«Արմենիա» միջազգային երաժշտական 5-րդ փառատոն*

# 16 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ
Հայաստանի պետական կամերային նվագախումբ

***11 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Ջանլուկա Մարչիանո
Լավարդ Սկոու-Լարսեն
Միխայիլ Կիրխհոֆ
Դմիտրի Յաբլոնսկի
Իլյա Նորշտեյն
Մարիուս Ստրավինսկի
Անտոն Շաբուրով
Կոնրադ վան Ալֆեն
Ալան Չիրկոպ
Ֆելիքս Կորոբով

***16 մենակատար***

Սերգեյ Դոգադին (ջութակ)
Դանիել Լոզակովիչ (ջութակ)
Պավել Գիլիլով (դաշնամուր)
Ջին Յան (դաշնամուր)
Գրաֆ Մուրժա (ջութակ)
Մաքսիմ Ռուբցով (ֆլեյտա)
Նարեկ Հախնազարյան (թավջութակ)
Ժան-Պոլ Գասպարյան (դաշնամուր)
Յոլ Ում Սան (դաշնամուր)
Ֆումիակի Միուրա (ջութակ)
Վլադիմիր Օվչիննիկով (դաշնամուր)
Ռեմի Ժենյե (դաշնամուր)
Գիլ Շահամ (ջութակ)
Յուրի Մեդյանիկ (բայան)
Սթիվեն Իսերլիս (թավջութակ)
Միխայիլ Պլետնյով (դաշնամուր)

## *Խաչատրյանի անվան 9-րդ միջազգային փառատոն*

# 4 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***Դիրիժոր***՝ Սերգեյ Սմբատյան

***5 մենակատար***

Ալեքսանդր Ռոմանովսկի (դաշնամուր)
Վալենտինա Լիսիցա (դաշնամուր)
Նիկիտա Բորիսո-Գլեբսկի (ջութակ)
Վահագն Հայրապետյան (դաշնամուր)
Արմեն Հյուսնունց (սաքսոֆոն)

## *Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոն*

# 3 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***2 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Վահագն Պապյան

***5 մենակատար***

Արուս Աճեմյան (դաշնամուր)
Գևորգ Գինոսյան (բարիտոն)
Ժան-Պոլ Գասպարյան (դաշնամուր)
Կարեն Շահգալդյան (ջութակ)
Արմինե Գրիգորյան (դաշնամուր)

## *Խաչատրյանի անվան 18-րդ միջազգային մրցույթ*

# 2 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***Դիրիժոր՝*** Սերգեյ Սմբատյան

***Մենակատար՝*** Քրիստոֆ Բարատի (ջութակ)

## *Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների փառատոն*

# 3 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***2 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Հանու Լինտու

***2 մենակատար***

Լետիցիա Մորենո (ջութակ)
Ակսել Դավթյան (բարիտոն)

*«Սիմֆոնիկ Երևան» միջազգային երաժշտական փառատոն*

# 12 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ և նվագախմբի լարային կազմ

***3 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Դանիել Ռայսկին
Գերգելի Մադարաշ

***18 մենակատար***

Նիկոլայ Պողոսյան (ֆագոտ)
Անահիտ Դիլբարյան (դաշնամուր)
Արմինե Գրիգորյան (դաշնամուր)
Սոնա Բարսեղյան (դաշնամուր)
Գևորգ Ավետիսյան (ֆլեյտա)
Անահիտ Դիլբարյան (դաշնամուր)
Ջովանի Անդրեա Զանոն (ջութակ)Ֆաբրիցիո Մելոնի (կլարնետ)
Բրանոն Չո (թավջութակ)
Նոյեմի Գյորի (ֆլեյտա)
Մարկ Բուշկով (ջութակ)
Վանեսսա Բենելլի Մոսել (դաշնամուր)
Շվովֆեյ Յան (կիթառ)
Նիկիտա Մնդոյանց (դաշնամուր)
Նենսի Ժոու (ջութակ)
Խաչատրյանի անվան դաշնամուրային եռյակ
Կարեն Շահգալդյան (ջութակ)
Ալեքսանդր Ռամմ (թավջութակ)
Արմինե Գրիգորյան (դաշնամուր)

## *«Արմենիա» միջազգային երաժշտական 6-րդ փառատոն*

# 5 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***2 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Դանիել Ռայսկին

***6 մենակատար***

Գոթյե Կապյուսոն (թավջութակ)
Ջուզեպպե Ջիբբոնի (ջութակ)
Ջազմին Չոյ (ֆլեյտա)
Գիլ Շահամ (ջութակ)
Յոզեֆ Կալեյա (տենոր)
Միշա Մայսկի (թավջութակ)

## *Խաչատրյանի անվան 10-րդ միջազգային փառատոն*

# 5 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ

***2 դիրիժոր***

Սերգեյ Սմբատյան
Ջորջ Փեհլիվանյան

***5 մենակատար***

Սնակ Ավանեսյան (թավջութակ)
Վահագն Հայրապետյան (դաշնամուր)
Մասսիմո Սպադա (դաշնամուր)
Անաստասիա Կոբեկինա (թավջութակ)
Կարմինե Լաուրի (ջութակ

*Այլ համերգներ*

# 14 համերգ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ
Հայաստանի պետական կամերային նվագախումբ
Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ

***8 դիրիժոր***

Ռոբերտ Մլքեյան
Հարություն Արզումանյան
Ջանլուկա Մարչիանո
Ստեֆան Ֆրուխտ
Սերգեյ Սմբատյան
Էլիաս Բրաուն
Անդրեաս Օտտենզամեր
Վլադիմիր Սպիվակով

***15 մենակատար***

Ջոզեֆ Մորիս Վեդեր (դաշնամուր)
Գևորգ Հակոբյան (բարիտոն)
Գևորգ Դաբաղյան (դուդուկ)
Մարկ Բուշկով (ջութակ)
Միրիամ Պրանդի (թավջութակ)
Դիանա Ադամյան (ջութակ)
Ֆրեդդի Քեմպֆ (դաշնամուր)
Մաքսիմ Վենգերով (ջութակ)
Լիլիթ Զաքարյան (դաշնամուր)
Անահիտ Դիլբարյան (դաշնամուր)
Սերգեյ Դոգադին (ջութակ)
Գլորիա Կամպաներ (դաշնամուր)
Ալեքսանդր Ռամմ (թավջութակ)
Աննա Ագլատովա (սոպրանո)
Ալեքսանդր Կլյուչկո (դաշնամուր)

# ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՅՑԵՐ

Հիմնադրամը, կարևորելով իր կրթաթոշակառուների մշակութային բազմակողմանի զարգացածություն, հայ ժողովրդի պատմության, գիտական, գրական և հոգևոր ժառանգության իմացության անհրաժեշտությունը, նախաձեռնել է այցեր Հայաստանի տարբեր թանգարաններ՝ առաջնորդվելով կրթաթոշակառուների նախընտրություններով։





# ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

- Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
- Փարաջանովի թանգարան
- Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան
- Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
- Երևանի ժամանակակից արվեստի թանգարան
- Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ
- Մատենադարան
- Լուսինե Զաքարյանի տուն-թանգարան
- Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան
- Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան
- Երվանդ Քոչարի թանգարան
- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝
  - «Ալեք և Մարի Մանուկյան» Գանձատուն
  - «Ռուբեն Սևակ» թանգարան
  - Վեհարանի «Ոսկեդարան» ցուցասրահ

# ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՇԵՐ

Մայիսի 21-ին «Թանգարանային գիշեր» համաեվրոպական միջոցառման առթիվ կրթաթոշակառուները հրավիրվել են Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան՝ մասնակցելու «Հանդիպում կոմպոզիտորի պատշգամբում» նախագծին, որի շրջանակներում զրույց- քննարկում են ունեցել նախագծի հյուրերի՝ հայտնի դաշնակահար և ՀՀ վաստակավոր արտիստ Հայկ Մելիքյանի և պրոդյուսեր, կարիերային ինքնորոշման փորձագետ Ալեքսանդր Պլատո Հակոբյանի հետ: Հանդիպմանը խոսվել է երաժշտության, կրթության, նպատակների, մասնագիտական կայացման, զարգացման և կարիերայի մասին:







# ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Կարևորելով օտար լեզուների իմացությունը ժամանակակից աշխարհում, բարելավելու համար կրթաթոշակառուների՝ արտիստների հետ օտար լեզուներով հաղորդակցման հմտությունները և գիտակցելով նրանց խորհուրդները լիարժեք ընկալելու անհրաժեշտությունը՝ Հիմնադրամը ձեռնարկել է համագործակցություն Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի հետ՝ կնքելով համագործակցության հուշագիր: Կրթաթոշակառուների համար 2022թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել է անգլերենի և ռուսաց լեզվի բանավոր խոսքի զարգացման 46 անվճար դաս, այդ թվում՝ անգլերենի ***34*** և ռուսաց լեզվի ***12*** դաս: Դասընթացներն անց են կացվել Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում և առցանց տարբերակով



# ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2021/2022թթ -ի ծրագրի շրջանակներում կատարված կանխատեսումներ ու փաստացի արդյունքներ

| | *Կանխատեսում* | *Փաստացի արդյունք* |
|---|---|---|
| Հայտեր | 80 | 86 |
| Վարպետության դասեր | 118 | 153 |
| Արտիստներ և պրոֆեսորներ | 40 | 55 |
| Միջոցառումներ (համերգներ, թանգարանային այցեր, սեմինար) | 31 | 30 |

# ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Հիմնադրամի կրթաթոշակառու լինելու ընթացքում երեխաները մասնակցել են մի շարք միջազգային և հանրապետական մրցույթների և արժանացել պատվավոր մրցանակների:



# *Միրա Ավանեսյան / դաշնակահար*

*1-ին մրցանակ*
BTHVN Wien միջազգային առցանց երաժշտական մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին կարգի դափնեկիր*
4-րդ միջազգային եվրասիական առցանց մրցույթ-փառատոն «Великии шелковыи путь», Մշակույթների երկխոսություն (Սանկտ-Պետերբուրգ, 2021թ.)

*1-ին մրցանակ*
Piano Forum առցանց երաժշտական մրցույթ (Մեծ Բրիտանիա, 2021թ.)

*Գրան Պրի*
21st Century Talents առցանց երաժշտական մրցույթ (Canada, 2021թ.)

*Գրան Պրի*
Սերգեյ Ռախմանինովի անվան դաշնամուրի 1-ին միջազգային առցանց մրցույթ (Բոսնիա և Հերցեգովինա, 2021թ.)



*Արժաթե մրցանակ*
WPTA Finland դաշնամուրի 3-րդ միջազգային առցանց մրցույթ (Ֆինլանդիա, 2021թ.)

*1-ին մրցանակ*
Rocky Mountain առցանց երաժշտական մրցույթ (Կանադա, 2021թ.)

*1-ին կարգի դափնեկիր*
Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 6-րդ միջազգային մրցույթ-փառատոն՝ նվիրված կոմպոզիտորի 100-ամյա հոբելյանին (Հայաստան, 2021թ.)

## *Սվետլանա Հակոբյան / դաշնամուր*

*1-ին մրցանակ*
«Կամերտոն-սոլիստ» կատարողական արվեստի 3-րդ միջազգային մրցույթ (Հայաստան, 2022թ.

*2-րդ մրցանակ*
BTHVN Wien միջազգային առցանց երաժշտական մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*Արծաթե մեդալ*
ԱՊՀ երկրների երիտասարդական 16-րդ Դելֆյան խաղեր (Տաջիկստան, 2022թ.)

*Արծաթե մրցանակ*
Amadeus International Music Awards միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*3-րդ մրցանակ և Best Musicality անվանակարգ*
Elevato Stanza պատանի դաշնակահարների միջազգային առցանց մրցույթ (2022թ.)



*1-ին մրցանակ և Ելույթի հրավեր*
Royal Albert Hall համերգասրահում Piano Forum առցանց երաժշտական մրցույթ (Մեծ Բրիտանիա, 2021թ.)

*1-ին կարգի դափնեկիր*
4-րդ միջազգային եվրասիական առցանց մրցույթ-փառատոն «Великий шелковый путь», Մշակույթների երկխոսություն (Սանկտ-Պետերբուրգ, 2021թ.)

*3-րդ մրցանակ*
ԱՊՀ երկրների երիտասարդական 15-րդ Դելֆյան խաղեր, առցանց (ՌԴ, 2021թ.)

*Արծաթե մրցանակ*
WPTA Finland դաշնամուրի 3-րդ միջազգային առցանց մրցույթ (Ֆինլանդիա, 2021թ.)

*1-ին կարգի դափնեկիր և Հատուկ մրցանակ*
Ա. Բաբաջանյանի ստեղծագործության լավագույն կատարման համար
Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 6-րդ միջազգային մրցույթ-փառատոն՝ նվիրված կոմպոզիտորի 100-ամյա հոբել յանին (Հայաստան, 2021թ.)

## *Լյանա Ուլիխանյան / թավջութակ*



*Ոսկե մրցանակ և Ավստրիայում ելույթով հանդես գալու հրավեր*
Amadeus International Music Awards միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022 թ.)

*1-ին մրցանակ և Ավստրիայում ելույթով հանդես գալու հրավեր*
BTHVN Wien միջազգային առցանց երաժշտական մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
Debut Concert 4-րդ միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
MaestrosVision Awards 2022 թավջութակահարների առցանց միջազգային մրցույթ (Չինաստան, 2022թ.)

*2-րդ մրցանակ, CD ձայնագրելու, վարպետության դասերի մասնակցելու և մենահամերգ ունենալու հնարավորություն*
WorldVision միջազգային 1-ին երաժշտական մրցույթ (Ավստրիա, 2022թ.) Համերգով ելույթ է ունեցել Ավստրիայի Կոնցերտհաուս համերգասրահում

*1-ին մրցանակ և վարպետության դասերի մասնակցելու հնարավորություն*
Montfort թավջութակահարների 1-ին միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 9-րդ մրցույթ (Հայաստան, 2022թ.)

## *Հայկ Հեքեքյան / հոբոյ*

*Ոսկե մրցանակ*
Amadeus International Music Awards միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022)

*1-ին մրցանակ*
Տոկիոյի միջազգային երիտասարդական առցանց երաժշտական մրցույթ (Ճապոնիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
London Classical առցանց երաժշտական մրցույթ (Մեծ Բրիտանիա, 2022)

*Գրան Պրի*
«ՀԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ» երաժշտական մրցույթ (Հայաստան, 2022թ.)

*1-ին մրցանակ և «Հանդիսատեսի համակրանք» մրցանակ*
Ստոկհոլմի 8-րդ միջազգային առցանց երաժշտական մրցույթ (Շվեդիա, 2021թ.)

*1-ին մրցանակ*
ԱՊՀ երկրների երիտասարդական 15-րդ Դելֆյան խաղեր, առցանց (ՌԴ, 2021թ.)



## *Նարեկ Հեքեքյան / թավջութակ*

*Արծաթե մրցանակ*
Amadeus International Music Awards միջազգային առցանց մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
BTHVN Wien միջազգային առցանց երաժշտական մրցույթ (Ավստրիա, 2022թ.)

*1-ին մրցանակ*
Տոկիոյի միջազգային երիտասարդական առցանց երաժշտական մրցույթ (Ճապոնիա, 2022թ.)

*2-րդ մրցանակ*
London Classical առցանց երաժշտական մրցույթ (Մեծ Բրիտանիա, 2022թ.)



## *Օվսաննա Հարությունյան / ջութակ*

*2-րդ մրցանակ*
ԱՊՀ երկրների երիտասարդական 15-րդ Դելֆյան խաղեր, առցանց
(ՌԴ, 2021թ.)





## *Արսեն Բալայան / կլարնետ*

*Գրան Պրի*
«Կամերտոն-սոլիստ» կատարողական արվեստի 3-րդ միջազգային մրցույթ
(Հայաստան, 2022թ.)

*Գրան Պրի*
«ՀԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ» երաժշտական մրցույթ
(Հայաստան, 2022թ.)

## *Էդուարդ Գևորգյան / դաշնամուր*

*1-ին մրցանակ*
Piano Talents 11-րդ միջազգային առցանց փառատոն (Իտալիա, 2021)

*1-ին մրցանակ*
Marbella դաշնակահարների միջազգային առցանց երաժշտական փառատոն 2021
(Իսպանիա, 2021թ.) և Իսպանիայում մասնակցություն Marbella դաշնակահարների միջազգային երաժշտական փառատոն 2022-ին
(վարպետության դասեր և ելույթ Մարբելայի
Auditorio José Pernia Calderón համերգասրահում)

*3-րդ մրցանակ և դրամական պարգև (70 EUR)*
Constanta միջազգային առցանց մրցույթ-փառատոն երիտասարդ դաշնակահարների համար
(Ռումինիա, 2021թ.)

*2-րդ մրցանակ*
Verona երիտասարդ դաշնակահարների միջազգային առցանց մրցույթ (Իտալիա, 2021թ.)



## *Էդուարդ Չավուշյանց / դաշնամուր*

*1-ին կարգի դափնեկիր, Ոսկե մեդալ և Հատուկ մրցանակ*
Ա. Բաբաջանյանի ստեղծագործության լավագույն կատարման համար
Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների 6-րդ միջազգային մրցույթ-փառատոն՝
նվիրված կոմպոզիտորի 100-ամյա հոբելյանին (Հայաստան, 2021թ.)

*2-րդ կարգի դափնեկիր*
Solinaria դաշնակահարների առցանց միջազգային մրցույթ (Բուլղարիա, 2022թ.)



## *Վիկտորյա Պետրոսյան / ֆլեյտա*

*2-րդ մրցանակ*
«Կամերտոն-սոլիստ» կատարողական արվեստի 3-րդ միջազգային մրցույթ
(Հայաստան, 2022թ.)

*1-ին մրցանակ և Հատուկ մրցանակ*
Վաղարշապատի «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների
հանրապետական մրցույթ-փառատոն
(Հայաստան, 2022թ.)



## *Հայկ Մարտիրոսյան / ջութակ*

*3-րդ մրցանակ*
Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական 9-րդ մրցույթ (Հայաստան, 2022թ.)





## *Տիգրան Գասպարյան / հոբոյ*

*1-ին մրցանակ*
ԱՊՀ երկրների երիտասարդական 15-րդ Դելֆյան խաղեր, առցանց (ՌԴ, 2021թ.)

# ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՑ



## *Վիկտորյա Պետրոսյան*

Այս մեկ տարվա ընթացքում ավելի ու ավելի եմ համոզվել, որ ընտրել եմ ճիշտ ճանապարհ՝ դառնալ բարձրակարգ երաժիշտ-ֆլեյտահար և, կարծում եմ, ավելի մոտեցա երազանքիս: Հիմնադրամն ինձ օգնեց ավելի կրթվել, զարգանալ, ճանաչել: Երբեք չեմ մոռանա վարպետության դասերը, մեր ներկայությունը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգներին, մենակատարների հետ հանդիպումները, շփումը, փորձի փոխանակումը, թանկարժեք խորհուրդները: Կարևոր էր նաև անսամբլային տարբերակով նվագելու փորձի ձեռքբերումը: Մեծ սիրով կհիշեմ նաև թանգարաններ այցերը:

Հիմնադրամն ինձ օգնեց մեկնել Մոսկվա և մասնակցել Վ. Սպիվակովի հիմնադրամի կազմակերպած համերգին, էլ ավելի զարգացնել ռուսաց լեզվի և անգլերենի գիտելիքներս: Շատ օգնել է բոլորիս նաև նյութական աջակցությունը՝ մեր կրթաթոշակը: Սա նս զարգանալու, մասնագիտական աճ ունենալու համար մեծ խթան է: Չեմ մոռանա նաև մեր՝ խմբով անցկացրած ժամանակը:

Այժմ աշխատում եմ, պարապում եմ ավելի մեծ եռանդով, ավելի մեծ պատասխանատվությամբ: Հիմնադրամի կողմից մշտապես զգացել եմ հոգատարություն և աջակցություն ցանկացած հարցում: Շնորհակալ եմ և անչափ սիրում եմ իմ հարազատ Հիմնադրամի բոլոր անդամներին, կազմակերպիչներին, ղեկավարներին՝ մշտապես կողքիս լինելու համար: Այս մեկ տարին իմ կյանքում թողեց անջնջելի հետք: Այն շատ հագեցած էր, պայծառ, լուսավոր և դրական լիցքերով լի: Եվս մեկ անգամ շնորհակալություն, սիրում եմ բոլորիդ:



## Տիգրան Գասպարյան

Այս տարվա իմ մասնագիտական աճում և ձեռքբերումներում կարևորագույն դեր է կատարել «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամը:
Պատիվ եմ ունեցել վարպետության դասերստանալ հայտնի հոբոյահարների կողմից, մասնակցել եմ Հիմնադրամի կազմակերպած օտար լեզվի դասընթացներին, ներկա եմ գտնվել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգներին:

Ձեռք եմ բերել լավ ընկերներ, որոնց հետ շփվում եմ նաև ծրագրից դուրս: Հիմնադրամի աջակցության շնորհիվ մեկնել եմ Մոսկվա և մասնակցել Վ. Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի կազմակերպած համերգին:

Հիմնադրամը շատ մեծ դեր ունեցավ իմ երաժշտական ճանապարհին: Շնորհակալ եմ պարոն Սերգեյ Սմբատյանին, տիկին Աննա Տեր-Հովակիմյանին և մեր Լիդա Արշակյանին՝ միշտ կողքիս լինելու համար:



## Արսեն Բալայան

Ես, դառնալով «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կրթաթոշակառու, վայելեցի իմ յուրաքանչյուր վայրկյանը այս մեծ և հրաշալի ընտանիքում: Թերևս կցանկանայի ասել, որ մասնակցությունը Հիմնադրամի ծրագրին իմ կյանքում ամենամեծ հաջողություններից է:

Ցանկանում եմ խորին շնորհակալությունս հայտնել Հիմնադրամի տնօրեն տիկին Աննա Տեր- Հովակիմյանին, Մաեստրո Սերգեյ Սմբատյանին, ինչպես նաև Հիմնադրամի անձնակազմի մյուս անդամներին՝ այսքան հոգատար լինելու և այսքան պրոֆեսիոնալ աշխատանքի համար: Դուք պարզապես հրաշք եք:



## *Լյանա Ուլիխանյան*

Մեկ տարի շարունակ եղել եմ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կրթաթոշակառու: Հիմնադրամի դրամական օժանդակության շնորհիվ վերանորոգվել է գործիքս, անհրաժեշտության դեպքում գնվել են պարագաներ գործիքիս համար:

Այցելել եմ թանգարաններ, ուսումնասիրել անգլերենը, մասնակցել վարպետության դասերի անվանի թավջութակահարների մոտ, ելույթ եմ ունեցել Մոսկվայում՝ Վ. Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի համերգին և, ոչ պակաս կարևոր ինձ համար, ձեռք եմ բերել շատ երաժիշտ ընկերներ և ելույթ ունեցել նրանց հետ:

Շնորհակալ եմ տիկին Աննա Տեր-Հովակիմյանին, Մաեստրո Սերգեյ Սմբատյանին, Հիմնադրամի աշխատակազմին՝ համերաշխ և ջերմ մթնոլորտ ստեղծելու և համագործակցության համար: «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամին մաղթում եմ երկար և բազմաբովանդակ աշխատանքային տարիներ, շնորհալի երեխաների նոր բացահայտումներ, բացահայտված պատանիներին շարունակական ուշադրություն և օժանդակություն:

Շնորհակալություն մեր երաժշտական կյանքն ու աշխարհը գունավորելու, հետաքրքիր և բազմազբաղ դարձնելու համար:



## *Ալեքս Գրիգորյան*

«Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կրթաթոշակառու լինելը միաժամանակ և՛ հպարտություն է, և՛ պարտավորություն: Սա մի հարթակ է, որտեղ պատանի երաժիշտներին ընձեռվում են լայն հնարավորություններ՝ կատարելագործվելու իբրև երաժիշտ, մարդ, գործընկեր, ճանապարհի ընկեր: Այստեղ տիրում են մարդկային բարձր հարաբերություններ միևնույն հետաքրքրությունները և արժեքները կիսող մարդկանց միջև:

Հիմնադրամը տալիս է հնարավորություն վարպետության դասեր ստանալ աշխարհահռչակ և լեգենդար արտիստներից, այցելել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի բարձրաճաշակ ու անկրկնելի համերգներին, ելույթ ունենալ Հայաստանի և արտասահմանյան լավագույն դահլիճներում, կատարելագործել օտար լեզուների իմացությունը: Հիշարժան են այն բացառիկ տպավորությունները, որոնք կրթաթոշակառուները ստանում են մշակութային կենտրոններ այցելելիս, որով ձևավորվում է ոչ միայն նրանց էսթետիկական ճաշակը, այլև ամրապնդվում է հայրենասիրական ոգին:

Շնորհակալություն «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամին:



## Աիդա Ավանեսյան

Հիմնադրամի կրթաթոշակառու լինելով՝ ես հայտնվեցի մի մեծ և հոգատար ընտանիքում, որտեղ անսահման շատ է սերը և ջերմությունը:
Ինձ հնարավորություն ընձեռվեց ունենալ բազմաթիվ վարպետաց դասեր այն մարդկանց հետ, ում հետ նույն բեմում լինելը պատիվ է:

Ունեցել եմ անմոռանալի օրեր, հիշարժան պահեր, ուսուցողական այցեր, այցելել եմ անգլերենի և ռուսաց լեզվի դասնթացների, ձեռք եմ բերել հիանալի ընկերներ:

Շնորհակալություն եմ հայտնում «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի տնօրեն տիկին Աննա Տեր-Հովակիմյանին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանին և մեր բարեհամբույր Լիդա Արշակյանին:



## Օվսաննա Հարությունյան

Կրթաթոշակառու լինելու այս մեկ տարվա ընթացքում ես շատ հարուստ փորձառություն ձեռք բերեցի: Վարպետության դասերը և հանդիպումները աշխարհահռչակ երաժիշտների հետ թույլ տվեցին ինձ հղկել իմ կատարողական արվեստը, ծանոթանալ երաժշտության մեկնաբանման այլ մոտեցումներին և լինել համընթաց փոփոխվող ժամանակներին:

Հիմնադրամի շնորհիվ այցելեցինք թանգարաններ՝ նպատակ ունենալով առավել մոտ գտնվել արվեստին, հարստացնել մեր ներաշխարհը, լրացնել որոշակի բացեր: Օտար լեզվի դասընթացները թույլ տվեցին ավելի լավ հասկանալ արտասահմանյան երաժիշտներին, առավել ամբողջական ըմբռնել վարպետաց դասի ընթացքում փոխանցվող գիտելիքն ու Հմտությունը:

Հիմնադրամի ցուցաբերած ֆինանսական աջակցությունը հետագայում կուղղվի գործիքի ձեռքբերմանը. լավ գործիքի առկայությունը չափազանց կարևոր է երաժշտի համար: Հուսով եմ, որ մի օր մեր սիրելի Հիմնադրամը կունենա լավ երաժշտական գործիքների հավաքածու և, ինչու ոչ, լավագույն կրթաթոշակառուները հնարավորություն կունենան նվագել աշխարհահռչակ գործիքներով:
Ես շատ շնորհակալ եմ Հիմնադրամի ողջ անձնակազմին իրենց անձնվեր աշխատանքի, ստեղծած բոլոր հնարավորությունների և մեր հետագա համագործակցության համար: Ես համարում եմ, որ Հիմնադրամը ինձ մեկ քայլ առաջ ուղղորդեց դեպի կատարելություն, դեպի համաշխարհային բեմեր:



## *Հայկ Մարտիրոսյան*

Այս մեկ տարվա ընթացքում Հիմնադրամի կրթաթոշակառու լինելով՝ ես հանդիպել եմ հանրահայտ երաժիշտների և պրոֆեսորների, որոնք մեծ սիրով դասընթացներ են անցկացրել մեզ հետ:

Շնորհակալ եմ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին՝ ի դեմս գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի, աշխարհահռչակ երաժիշտների համերգների կազմակերպման համար: Հիմնադրամը կազմակերպել է օտար լեզուների դասընթացներ: Այցելություն ենք ունեցել տուն-թանգարաններ, որպեսզի է՛լ ավելի լավ ճանաչենք մշակույթի հայտնի գործիչների կյանքը, անցած ճանապարհը և ստեղծագործական ուղին:

Ես ուրախ եմ, որ դարձել եմ այս մեծ ընտանիքի անդամ, որը ինձ տվել է լավ ընկերներ և լավ միջավայր:

Եվ ի վերջո կարող եմ համոզված ասել, որ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի կրթաթոշակառու լինելու փաստը իմ շատ ու շատ հասակակիցների մոտ առաջացրել է ցանկություն, նպատակ, որ իրենք էլ լինեն այս հիմնադրամի անդամ:

Շնորհակալություն այս հրաշալի մեկ տարվա համար...



# ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

## *Մեր երախտագիտությունն ենք հայտնում...*

***Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին*** ՝ ի դեմս գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերգեյ Սմբատյանի, և ամբողջ անձնակազմին, ովքեր մշտապես մեզ աջակցում և մեր կողքին են, ում շնորհիվ մենք հնարավորություն ունենք շփվել աշխարհի ամենահայտնի արտիստների հետ, ստանալ նրանցից անգնահատելի խորհուրդներ, հարստացնել մեր ներաշխարհը և ձևավորել երաժշտական ճաշակ բարձրարժեք երաժշտարվեստի նկատմամբ:

***Մշակույթի աջակցության եվրոպական հիմնադրամին*** ՝ ի դեմս նախագահ Կոնստանտին Իշխանովի, Հիմնադրամին ցուցաբերած մեծ աջակցության համար, կրթաթոշակառուների մասնակցությունը Հայաստանում և արտերկրում կազմակերպված տարբեր մշակութային միջոցառումներին հնարավոր դարձնելու, բազմաթիվ հանրահռչակ արտիստների հետ հանդիպելու հնարավորություններ ընձեռելու և կրթաթոշակառուների համար ոգեշնչման առիթներ ստեղծելու համար:

***Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանին*** ՝ ի դեմս ռեկտոր Կարինե Հարությունյանի, օտար լեզուների դասընթացների կազմակերպման և պատանի երաժիշտների կրթման գործում ցուցաբերած պատրաստակամության համար:

***Աջակից-գործընկերներին և բոլոր նրանց***, ովքեր անտարբեր չեն մնում տաղանդների կրթության և զարգացման նկատմամբ, հավատում են Հայաստանի տաղանդների ներուժին և ներդրում են կատարում մշակութային Հայաստանի վաղվա օրվա համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ · ՅՈՒՆԻԲԱՆԿ · HSBC · evocaBANK · IDBank · ABB · ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

*Հիմնադրամի ընկերներին՝*
Արման Հակոբյանին և Նելլի Մարտիրոսյանին:

***Երաժշտական հապապրություններին և ուսուցչական համայնքին՝***
ի դեմս տնօրենների, ուսուցիչների և նվագակցողների՝ բարձր պրոֆեսիոնալիզմի,
ներդրած ջանքերի, երիտասարդ սերնդի կրթման, նրանց հաջողությունների գրանցման մեջ
ունեցած անգնահատելի ներդրման, յուրաքանչյուր աշակերտի հանդեպ իրենց պատասխանատվության,
անհատական մոտեցման և երկար տարիներ իրենց վեհ գործին նվիրվածության համար:

Հաշվետվությունը կազմեց Լիդա Արշակյանը
Հաշվետվությունը խմբագրեց և սրբագրեց Մերի Շաղոյանը
Հաշվետվությունը հաստատեց Աննա Տեր-Հովակիմյանը
Հաշվետվության դիզայնը՝ Լիլի Բաղդասյանի

***Շնորհակալություն բոլորին***

***Մենք հավատում ենք, որ միավորելով մեր ուժերը՝
կարող ենք փայլ ապագա սերունդներին համապատասխան
կրթական պաշար ապագան կառուցելու համար:***

***Լուսանկարները՝***

Լուսի Սարգսյանի
Էդգար Արշակյանի
Գարեգին Աղաբեկյանի
Լիլիա Օլխովայի
Անտոն Գլոբայի
Լիդիա Ժիրնովայի
Ալեքսանդր Պալեխինի
Արամ Կիրակոսյանի
AMAA-ի ֆեյսբուքյան էջից
Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի ֆեյսբուքյան էջից
«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի արխիվից

*«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամ*

Մոսկովյան փ. 31, գրասենյակ 166
ք. Երևան 0002, Հայաստանի Հանրապետություն

*Հեռ. + 374 (0) 11 232 113*
*էլ. հասցե՝ info@m4f.foundation*